



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

N \_\_\_\_\_

0047, ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

“ \_\_\_ “ \_\_\_\_\_ 2021թ.

Հեռ. (374-10) 65-05-53, 65-03-05

Էլ. փոստ՝ [info@hlib.am](mailto:info@hlib.am)

ԿԱՐԳԱԴՐԱԳԻՐ N° \_\_\_\_\_

«ՎԱԳԱ-ՖԱՐՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ՝ (ՀՎՀՀ՝ 01536316) ԴԵՂԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ  
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՆԵԼՈՒ (ՀԵՏԿԱՆՉԻ) ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 2019 թվականի փետրվարի 28-ի «Հայաստանի Հանրապետությունում չգրանցված կամ որակի պահանջներին չհամապատասխանող կամ պիտանիության ժամկետն անցած կամ գրանցումն ուժը կորցրած ճանաչված կամ գրանցումը կասեցված կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ ներմուծված դեղերի, կեղծ դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի մասին ահազանգի ծանուցման, շրջանառությունը դադարեցնելու և շրջանառությունից հանելու (հետկանչի) կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության թիվ 164-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը, 5-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերությունը, 18-րդ, 22-րդ և 26-րդ կետերը և «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասը, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲ ընկերության 2021 թվականի փետրվարի 22-ի թիվ 0101016121 փորձագիտական եզրակացությունը, համաձայն որի՝ 5-ՆՕԿ նիտրոքսոլին 50մգ թաղանթապատ դեղահատեր (50), պլաստիկ տարայում Լեկ Ֆարմայութիքալս դ.դ., Վերովսկովա փ. 57, 1526 Լյուբլյանա,



Սլովենիա՝ բաց թողնման հսկող, Լեկ Ֆարմասյուրիքալս դ.դ., Կոլոդվորսկա փ. 27, Մենգես, 1234, Սլովենիա՝ դեղաձևն արտադրող, փաթեթավորող, Լեկ Ֆարմասյուրիքալս դ.դ., Վերովսկովա փ. 57, 1526 Լյուբլյանա (Սլովենիա)-ի համար դեղի GJ1062, GS6407, GT1514, HA7288, HA7292, HD2591, HGO302, HH6297, HJ8368, HJ8369, HL1124, HL1218, HL5564, HL7984, HL7985, HN1206, HN6478, HT6824, HU4018, JN9252, JW5951, JW5952, JW5953, JX6321 սերիաների ընթացիկ կայունության փորձաքննության արդյունքում հայտնաբերվել է որակի անհամապատասխանություն, հաշվի առնելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշմամբ հաստատված ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրության 19-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջները.

## ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

Դեղը ներմուծող «ՎԱԳԱ-ՖԱՐՄ» ՍՊ ընկերությանը՝ ի դեմս տնօրեն Արտաշես Գրիգորյանի.

1. Սույն կարգադրագիրը ստանալու պահից 24 ժամվա ընթացքում մշակել հետկանչի պլան և այն համաձայնեցման ներկայացնել Տեսչական մարմին:

2. Համաձայնեցված հետկանչի պլանը ստանալուց հետո 3-օրյա ժամկետում ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ապահովելով «5-ՆՕԿ նիտրօքսոլին 50մգ թաղանթապատ դեղահատեր (50)» սերիա՝ GJ1062, պիտ. ժամկետ՝ 31. 05. 2021թ., սերիա՝ GS6407, պիտ. ժամկետ՝ 30. 09. 2021թ., սերիա՝ GT1514, պիտ. ժամկետ՝ 31. 10. 2021թ., սերիա՝ HA7288, պիտ. ժամկետ՝ 28. 02. 2022թ., սերիա՝ HA7292, պիտ. ժամկետ՝ 28. 02. 2022թ., սերիա՝ HD2591, պիտ. ժամկետ՝ 30. 04. 2022թ., սերիա՝ HGO302, պիտ. ժամկետ՝ 30.06.2022թ., սերիա՝ HH6297, պիտ. ժամկետ՝ 30.06.2022թ., սերիա՝ HJ8368, պիտ. ժամկետ՝ 31. 08. 2022թ., սերիա՝ HJ8369, պիտ. ժամկետ՝ 31. 08. 2022թ., սերիա՝ HL1124, պիտ. ժամկետ՝ 31. 08. 2022թ., սերիա՝ HL1218, պիտ. ժամկետ՝ 30. 09. 2022թ., սերիա՝ HL5564, պիտ. ժամկետ՝



30. 09. 2022թ., սերիա՝ HL7984, պիտ. ժամկետ՝ 30. 09. 2022թ., սերիա՝ HL7985, պիտ. ժամկետ՝ 30. 09. 2022թ., սերիա՝ HN1206, պիտ. ժամկետ՝ 31. 10. 2022թ., սերիա՝ HN6478, պիտ. ժամկետ՝ 31. 10. 2022թ., սերիա՝ HT6824, պիտ. ժամկետ՝ 30. 11. 2022թ., սերիա՝ HU4018, պիտ. ժամկետ՝ 31. 01. 2020թ., սերիա՝ JN9252, պիտ. ժամկետ՝ 31. 10. 2023թ., սերիա՝ JW5951, պիտ. ժամկետ՝ 31.03.2024թ., սերիա՝ JW5952, պիտ. ժամկետ՝ 31.03.2024թ., սերիա՝ JW5953, պիտ. ժամկետ՝ 30.04.2024թ., սերիա՝ JX6321, պիտ. ժամկետ՝ 31.05.2024թ., դեղի ՀՀ-ում շրջանառության դադարեցում և հետկանչ:

3. Հետկանչի ընթացքի իրականացված միջոցառումների մասին 3 օրը մեկ անգամ ներկայացնել հաշվետվություն Տեսչական մարմին՝ ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129 և [info@hlib.am](mailto:info@hlib.am), [pharmacy@hlib.am](mailto:pharmacy@hlib.am) հասցեներով:

4. Հետկանչի ավարտից հետո դեղի ոչնչացումը իրականացնել «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասով, 26-րդ հոդվածով և ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի փետրվարի 1-ի «Դեղատներում կամ դեղատնային կրպակներում բժշկական թափոնների հաշվառման կարգը սահմանելու մասին» N 05-Ն հրամանով սահմանված կարգով:

5. Տեսչական մարմնի իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի պետի պարտականությունները կատարող Արմինե Մինասյանին՝

1) ապահովել պաշտոնական զանգվածային լրատվության միջոցներով համապատասխան տեղեկատվության հրապարակումը,

2) դեղերի շրջանառությունը դադարեցնելու վերաբերյալ կարգադրագիրը արձակելուց հետո՝ նույն օրվա ընթացքում, էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել դեղերի շրջանառության բոլոր սուբյեկտներին՝ ներառելով տեղեկատվություն արտադրանքի անվանման, արտադրողի, սերիայի, շրջանառության ժամանակավոր դադարեցման պատճառների վերաբերյալ:

6. Սույն կարգադրագրի կատարման հսկողությունը հանձնարարել Տեսչական մարմնի դեղերի շրջանառության վերահսկողության վարչության պետ-տեսուչ Նելլի Թովմասյանին:

7. Սահմանված կարգով ապահովել սույն կարգադրագրի օրինակի հանձնումը «ՎԱԳԱ-ՖԱՐՄ» ՍՊ ընկերությանը ՀՀ, Արմավիրի մարզ, Թաիրով համայնք, Դեմիրճյան թաղամաս 4 փ. / 7 տ. հասցեով (էլ. փոստ՝ [vagapharm@web.am](mailto:vagapharm@web.am)):

Շնորհակալություն համագործակցության համար,

23.02.2021

X

ՀԱԿՈԲ ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Подписано: AVAGYAN HAKOB 3912770166

ՀԱԿՈԲ ԱՎԱԳՅԱՆ

Սույն կարգադրագիրն ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակիցներին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Սույն կարգադրագիրը ստանալու օրվանից 2 ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ակտն ընդունած տեսչական մարմին կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված ժամկետում՝ ՀՀ վարչական դատարան:

